ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«08» հոկտեմբերի 2020 թվականի N **341**

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ՀԱՄԱՅՆՔ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ, Ք.ՍՏԵՓԱՆԱՎԱՆ Գ. ՆԺԴԵՀ ՓՈՂՈՑ ԹԻՎ 15/1-3 ՀԱՍՑԵՈՎ, 06-007-0037-0031 ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.002 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՍՈՒՍԱՆՆԱ ԷԴԻԿԻ ՍԱՔԱՆՅԱՆԻՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սուսաննա Էդիկի Սաքանյանի 03.09.2020թ. թիվ Ս-286 ներկայացված դիմումը և 16.09.2020թ. թվականի N 16092020-06-0043 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը և Ստեփանավան համայնքի ավագանու 29.01.2018թ. թիվ 12-Ն որոշումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ և 24-րդ կետերով, 43-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետով, ՀՀ կառավարության 12.04.2001թ. թիվ 286 որոշման 14[1] կետով և 46.2-րդ կետի ա ենթակետով, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով և 75-րդ հոդվածի 5-րդ կետով ***որոշում եմ.***

1. Ստեփանավան համայնքի սեփականությունը հանդիսացող, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին դասվող, Գ. Նժդեհ փողոց թիվ 15/1-3 հասցեի 0.002 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը ավտոտնակ կառուցելու նպատակով 25 տարի ժամկետով, կառուցապատման իրավունքով տրամադրել Սուսաննա Էդիկի Սաքանյանին:
2. Կառուցապատման իրավունքով տրամադրվող հողամասի վարձավճարի չափը սահմանել 1 քմ-ի համար տարեկան 400 (չորս հարյուր) ՀՀ դրամ, ըստ որի 20 քմ հողամասի տարեկան վարձավճարը կազմում է 8000 (ութ հազար) ՀՀ դրամ:
3. Ստեփանավանի համայնքապետարանի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների, հաշվառման և հավաքագրման բաժնին, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Սուսաննա Էդիկի Սաքանյանի հետ կնքել հողամասի կառուցապատման իրավունքի պայմանագիր:
4. Պարտավորեցնել Սուսաննա Էդիկի Սաքանյանի պայմանագրից ծագող իրավունքները գրանցել ՀՀ կառավարությանն առընթեր կադաստրի պետական կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ. ՂԱՐԱՔԵՇԻՇՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«08» հոկտեմբերի 2020 թվականի N **342**

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ՀԱՄԱՅՆՔ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ Ք.ՍՏԵՓԱՆԱՎԱՆ Մ.ԲԱՂՐԱՄՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 126/1 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՉԱՓԵՐԸ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՄԱԿԵՐԵՍՆԵՐԸ ՃՇՏԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍ ՎԵՐԱՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՃՇՏՎԱԾ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով՝ Մ.Բաղրամյան փողոց թիվ 126/1 հասցեի անշարժ գույքի սեփականատեր Արա Գրիգորի Մելիքսեթյանի կողմից 06.10.2020թ. Մ-324 ներկայացված դիմումը՝ ՀՀ Լոռու մարզի համայնք Ստեփանավան ք. Ստեփանավան Մ. Բաղրամյան փողոց թիվ 126/1 հասցեի հողամասում առկա՝ Շուշանիկ Լևոնի Մելիքսեթյանին, Անահիտ Գագիկի Մելիքսեթյանին, Հայկ Գագիկի Մելիքսեթյանին և Արա Գրիգորի Մելիքսեթյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող ընդհանուր ճանապարհը վերացնելու, Մ.Բաղրամյան փողոց թիվ 126/1 հասցեների հողամասերի սահմանային չափերը և մակերեսները ճշտելու և հողամաս վերահատկացնելու խնդրանքը, 28.06.1981թ. կազմված գույքային թերթը, 02.06.2005թ. N 1029239 անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի պետական գրանցման վկայականը, 13.08.2020թ. թիվ 2465 գրանցամատյանով հաստատված անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը, 19.08.2020թ. թիվ 282 Ստեփանավան համայնքի ղեկավարի որոշումը, Մ. Բաղրամյան փողոց թիվ 130 հասցեի 08.12.2008թ. թիվ 2505453 անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի պետական գրանցման վկայականը, 29.09.2020թ. թիվ 3080 գրանցամատյանով հաստատված համաձայնությունը, «ԱՐՏՅՈՄ ՍԱՔԱՆՑԱՆ» ԱՁ-ի կողմից կազմված տեղագրական հատակագծերը, Ստեփանավան քաղաքի գլխավոր հատակագիծը, ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24 կետով, 43-րդ հոդվածով, ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասով, 64-րդ հոդվածի 8-րդ և 16-րդ մասերով, 3-րդ և 57-րդ հոդվածներով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 2-ին և 3-րդ հոդվածներով, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 01.06.2010թ. թիվ 186-Ն կադաստրային հատակագծերում և կադաստրային քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման հրամանով ***որոշում եմ.***

1. Ճշտել ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի ք.Ստեփանավան Մ. Բաղրամյան փողոց թիվ 126/1 հասցեի հողամասի սահմանային չափերը և մակերեսը համաձայն «ԱՐՏՅՈՄ ՍԱՔԱՆՑԱՆ» ԱՁ-ի կողմից 24.08.2020թ. կազմված տեղագրական հատակագիծի, որը համաձայն կադաստրային քարտեզի իր մեջ ներառում է՝ 06-007-0306-0003, 06-007-0306-0004,

06-007-0306-0009 կադաստրային ծածկագրերի բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասեր և 06-007-1551-0001 կադաստրային ծածկագրի ընդհանուր օգտագործման հողամաս, վերջինիս նկատմամբ փոխել գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման գործառնական նշանակության, քանի որ այդ հողամասը չի ընդգրկվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում և հիմք ընդունելով՝ Ստեփանավան քաղաքի գլխավոր հատակագիծը, 28.06.1981թ. կազմված գույքային թերթը, 02.06.2005թ. N 1029239 անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի պետական գրանցման վկայականը, 13.08.2020թ. թիվ 2465 գրանցամատյանով հաստատված անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը, 29.09.2020թ. թիվ 3080 գրանցամատյանով հաստատված համաձայնությունը, ղեկավարվելով՝ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 01.06.2010թ. թիվ 186-Ն կադաստրային հատակագծերում, կադաստրային քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման հրամանով և «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 2-ին և 3-րդ հոդվածներով, 0.054 հա հողամասից ավել օգտագործվող, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում չընդգրկված 0.01711 հա մակերեսով հողամասը վերահատկացնել Արա Գրիգորի Մելիքսեթյանին:

2. Ճանաչել՝ ք. Ստեփանավան Մ.Բաղրամյան փողոց թիվ 126/1 հասցեի 0.07111 հա ընդհանուր մակերեսով, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում չընդգրկված, հողամասի նկատմամբ Արա Գրիգորի Մելիքսեթյանի սեփականության իրավունքը:
3. Ք.Ստեփանավան Մ.Բաղրամյան փողոց թիվ 126/1 և Մ.Բաղրամյան փողոց թիվ 130 հասցեների հողամասերը 2001 թվականից առ այսօր օգտագործվել են «ԱՐՏՅՈՄ ՍԱՔԱՆՅԱՆ» ԱՁ-ի կազմված հատակագծերին համապատասխան: Համաձայն 02.06.2005թ. N 1029239 անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի պետական գրանցման վկայականի պետական գրանցում ստացած անասնագոմը 2001 թվականից առ այսօր փաստացի գոյություն չի ունեցել, վկայականը կազմվել է համաձայն 28.06.1981թ. կազմված գույքային թերթի, ուստի հիմք ընդունելով ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 01.06.2010թ. թիվ 186-Ն կադաստրային հատակագծերում, կադաստրային քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման հրամանը կատարել համապատասխան ուղղումներ վերը նշված հասցեների հողամասի մակերեսների և սահմանային չափերի վերաբերյալ համաձայն ներկայացված հատակագծերի:
4. Հողամասի սահմանները և մակերեսը հաստատվում են՝ «ԱՐՏՅՈՄ ՍԱՔԱՆՅԱՆ» ԱՁ-ի 24.08.2020թ. կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված տեղագրական հատակագիծի:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից, որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ. ՂԱՐԱՔԵՇԻՇՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«08» հոկտեմբերի 2020 թվականի N 343

ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ՀԱՄԱՅՆՔ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ Ք. ՍՏԵՓԱՆԱՎԱՆ Մ.ԲԱՂՐԱՄՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 130 ՀԱՍՑԵՆԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՉԱՓԵՐԸ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՄԱԿԵՐԵՍՆԵՐԸ ՃՇՏԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍ ՎԵՐԱՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ, ՃՇՏՎԱԾ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով՝ Մ. Բաղրամյան փողոց թիվ 130 հասցեի անշարժ գույքի ընդհանուր համատեղ սեփականատերեր՝ Շուշանիկ Լևոնի Մելիքսեթյանի, Անահիտ Գագիկի Մելիքսեթյանի, Հայկ Գագիկի Մելիքսեթյանի կողմից 06.10.2020թ. Մ-325 ներկայացված դիմումը՝ ՀՀ Լոռու մարզի համայնք Ստեփանավան ք. Ստեփանավան Մ. Բաղրամյան փողոց թիվ 126/1 հասցեի հողամասում առկա՝ Շուշանիկ Լևոնի Մելիքսեթյանին, Անահիտ Գագիկի Մելիքսեթյանին, Հայկ Գագիկի Մելիքսեթյանին և Արա Գրիգորի Մելիքսեթյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող ընդհանուր ճանապարհը վերացնելու, Մ.Բաղրամյան փողոց թիվ 130 հասցեի հողամասի սահմանային չափերը և մակերեսները ճշտելու և հողամաս վերահատկացնելու խնդրանքը, 20.07.1971թ. կազմված գույքային թերթը, 08.12.2008թ. թիվ 2505453 անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի պետական գրանցման վկայականը, 29.09.2020թ. թիվ 3080 գրանցամատյանով հաստատված համաձայնությունը, 28.06.1981թ. կազմված գույքային թերթը, 02.06.2005թ. N 1029239 անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի պետական գրանցման վկայականը, 13.08.2020թ. թիվ 2465 գրանցամատյանով հաստատված անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը, «ԱՐՏՅՈՄ ՍԱՔԱՆՅԱՆ» ԱՁ-ի կողմից կազմված տեղագրական հատակագծերը, Ստեփանավան քաղաքի գլխավոր հատակագիծը, ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 43-րդ հոդվածով, ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասով, 64-րդ հոդվածի 8-րդ և 16-րդ մասերով, 3-րդ և 57-րդ հոդվածներով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 2-ին և 3-րդ հոդվածներով, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 01.06.2010թ. թիվ 186-Ն կադաստրային հատակագծերում և կադաստրային քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման հրամանով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգով ***որոշում եմ.***

1. Ճշտել ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի ք. Ստեփանավան Մ. Բաղրամյան փողոց թիվ 130 հասցեի հողամասի սահմանային չափերը և մակերեսը համաձայն «ԱՐՏՅՈՄ ՍԱՔԱՆՅԱՆ» ԱՁ-ի կողմից 24.08.2020թ. կազմված տեղագրական հատակագիծի, որը

համաձայն կադաստրային քարտեզի իր մեջ ներառում է՝ 06-007-1551-0001 կադաստրային ծածկագրի ընդհանուր օգտագործման հողամաս, վերջինիս նկատմամբ փոխել գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման գործառնական նշանակության, հիմք ընդունելով՝ Ստեփանավան քաղաքի գլխավոր հատակագիծը, Մ. Բաղրամյան փողոց 126/1 հասցեի անշարժ գույքի 28.06.1981թ. կազմված գույքային թերթը, 02.06.2005թ. N 1029239 անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի պետական գրանցման վկայականը, 29.09.2020թ. թիվ 3080 գրանցամատյանով հաստատված համաձայնությունը, 08.12.2008թ. թիվ 2505453 անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի պետական գրանցման վկայականը, ղեկավարվելով՝ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 01.06.2010թ. թիվ 186-Ն կադաստրային հատակագծերում և կադաստրային քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման հրամանով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 2-ին և 3-րդ հոդվածներով, 0.074 հա հողամասից ավել օգտագործվող, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում չընդգրկված 0.00276 հա մակերեսով հողամասը ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով վերահատկացնել՝ Շուշանիկ Լևոնի Մելիքսեթյանին, Անահիտ Գագիկի Մելիքսեթյանին, Հայկ Գագիկի Մելիքսեթյանին:

2. Ճանաչել՝ ք. Ստեփանավան Մ. Բաղրամյան փողոց թիվ 130 հասցեի 0.07676 հա ընդհանուր մակերեսով, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում չընդգրկված, հողամասի նկատմամբ Շուշանիկ Լևոնի Մելիքսեթյանի, Անահիտ Գագիկի Մելիքսեթյանի, Հայկ Գագիկի Մելիքսեթյանի ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը:
3. Ք. Ստեփանավան Մ. Բաղրամյան փողոց թիվ 130 և Մ. Բաղրամյան փողոց թիվ 126/1 հասցեների հողամասերը 2001 թվականից առ այսօր օգտագործվել են «ԱՐՏՅՈՄ ՍԱՔԱՆՅԱՆ» ԱՁ-ի կազմված հատակագծերին համապատասխան: Համաձայն 02.06.2005թ. N 1029239 անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի պետական գրանցման վկայականի պետական գրանցում ստացած անասնագոմը 2001 թվականից առ այսօր փաստացի գոյություն չի ունեցել, վկայականը կազմվել է համաձայն 28.06.1981թ. կազմված գույքային թերթի, ուստի հիմք ընդունելով ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 01.06.2010թ. թիվ 186-Ն կադաստրային հատակագծերում, կադաստրային քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման հրամանը կատարել համապատասխան ուղղումներ վերը նշված հասցեների հողամասի մակերեսների և սահմանային չափերի վերաբերյալ համաձայն ներկայացված հատակագծերի:
4. Հողամասի սահմանները և մակերեսը հաստատվում են՝ «ԱՐՏՅՈՄ ՍԱՔԱՆՅԱՆ» ԱՁ-ի 24.08.2020թ. կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված տեղագրական հատակագիծի:
5. Հաստատել վերը նշված անշարժ գույքի նոր փոստային հասցեն՝ Մարզ Լոռի համայնք Ստեփանավան ք. Ստեփանավան Մ. Բաղրամյան փողոց 128 բնակելի տուն:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից, որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ. ՂԱՐԱՔԵՇԻՇՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«08» հոկտեմբերի 2020 թվականի N **344**

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ, Ք.ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 45Գ ՀԱՍՑԵՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ժաննա Վազգենի Մարգարյանի կողմից 07.10.2020թ. թիվ Մ-325 ներկայացված դիմումը և 06.10.2020թ. տրամադրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը՝ թիվ 3147 գրանցամատյանով և թիվ 132 ժառանգական գործով հաստատված, 29.04.2005թ. թիվ 2143149 անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման վկայականը, ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1 -ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ ***որոշում եմ.***

1. Ստեփանավան քաղաքի Երիտասարդական փողոց թիվ 45Գ հասցեով հողամասին և ավտոտնակին տրամադրել նոր փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ Ստեփանավան համայնք, ք. Ստեփանավան Երիտասարդական փողոց թիվ 45/3:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ. ՂԱՐԱՔԵՇԻՇՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«08» հոկտեմբերի 2020 թվականի N **345**

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ Ք. ՍՏԵՓԱՆԱՎԱՆ 06-007-0159-0002 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՄԻՆՉԵՎ 15.05.2001Թ. ՋԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐԱՐԱՏ ԱՂՎԱՆԻ ԱՅՎԱԶՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արարատ Աղվանի Այվազյանի կողմից 30.09.2020թ. թիվ Ա-320 ներկայացված դիմումը, «ԳԱԳԻԿ ՄԵՍՐՈՊՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐԻ» ԱՁ-ի կողմից կազմված տեղագրական հատակագիծը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասով, 64-րդ հոդվածի 8-րդ և 16-րդ մասերով, 3-րդ և 57-րդ հոդվածներով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ 1-ին մասի հոդվածի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387 որոշմամբ ***որոշում եմ.***

1. Վերականգնել Ստեփանավան համայնքի ք. Ստեփանավան 06-007-0159-0002 ծածկագրում գտնվող 0,04քմ բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի հողհատկացման հիմքերը՝

   ա/ Ստեփանավան քաղաքի 06-007-0159-0002 ծածկագրի հողամասի մակերեսը 0.04քմ

   բ/ հողամասի սահմանները և հատակագիծը համաձայն հավելվածի:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված 0.04քմ օրինական հողամասը, որը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք անհատույց սեփականության իրավունքով հատկացնել՝ Արարատ Աղվանի Այվազյանին:

3. Վերը նշված անշարժ գույքին՝ ՀՀ Լոռու մարզ, համայնք Ստեփանավան, ք Ստեփանավան 4-րդ միկրոշրջան 20-րդ փողոց 9 հասցեյի փոխարեն տրամադրել նոր փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ համայնք Ստեփանավան, ք. Ստեփանավան 4-րդ միկրոշրջան, Մուշ փողոց թիվ 9 հողամաս:
4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից: Որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ. ՂԱՐԱՔԵՇԻՇՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«09» հոկտեմբերի 2020 թվականի N **346**

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 06-007-0104-0028 ԾԱԾԿԱԳՐԻ ՀՈՂԱՄԱՍԻՑ 0.03648 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԳՐԱՆՑԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24 կետով, 43-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 27.04.2006թ. թիվ 570-Ն որոշումը, Ստեփանավան քաղաքային համայնքի 2013թ. հաստատված գլխավոր հատակագիծը, «ԱՐՏՅՈՄ ՍԱՔԱՆՅԱՆ» ԱՁ-ի կողմից կազմված տեղագրական հատակագիծը ***որոշում եմ.***

1. ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի 06-007-0104-0001 ծածկագրի տակ գտնվող հողամասից առանձնացված 0.03648 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հողամասի գործառնական նշանակությունը այլ հողեր գործառնական նշանակությունից, համաձայն քաղաքի գլխավոր հատակագծում փոփոխություններ կատարելու մասին 2013թ. հաստատված Ստեփանավան քաղաքի գլխավոր հատակագծի, փոխադրել հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասերի ֆոնդ:
2. Հողամասը չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և /կամ/ չի առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Ճանաչել 0.03648 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասի նկատմամբ Ստեփանավան համայնքի սեփականության իրավունքը:
4. Հողամասի սահմանները որոշվում են «ԱՐՏՅՈՄ ՍԱՔԱՆՅԱՆ» ԱՁ-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:
5. Վերը նշված հողամասին տրամադրել փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ Ստեփանավան համայնք, ք. Ստեփանավան Վիրահայոց փողոց 1-ին փակուղի թիվ 1/1:
6. Դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանում նշված հողամասի նկատմամբ իրավունքների պետական գրանցում իրականացնելու համար:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ. ՉԱՐԱՔԵՇԻՇՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«09» հոկտեմբերի 2020 թվականի N **347**

ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «ՏԻՄ» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետով և հիմք ընդունելով Ստեփանավան համայնքի ավագանու 29.11.2019 թվականի N 86-Ն որոշման 4-րդ կետի բ ենթակետը ***որոշում եմ.***

1. Ստեփանավան համայնքի 2020 թվականի բյուջեով նախատեսված «Նախադպրոցական կրթություն (այլ ընթացիկ տրանսֆերտային վճարներ ոչ առևտր. կազմ.)» ծրագրի նախահաշվի (բաժին 9 խումբ 1 դաս 1) «4637 – Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածի գումարից պակասեցնել 951200 /ինը հարյուր հիսունմեկ հազար երկու հարյուր/ ՀՀ դրամ գումար:
2. «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)» ծրագրի նախահաշվի (բաժին 1 խումբ 6 դաս 1) «4269 – Հատուկ նպատակային այլ նյութեր» ծախսային հոդվածի գումարը ավելացնել 71200 /յոթանասունմեկ հազար երկու հարյուր/ ՀՀ դրամով:
3. «Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող)» ծրագրի նախահաշվի (բաժին 10 խումբ 7 դաս 1) «4239 – Ընդհանուր բնույթի այլ

ծառայություններ» ծախսային հոդվածի գումարը ավելացնել 880000 /ութ հարյուր ութսուն հազար/ ՀՀ դրամով:

4. Ստեփանավան համայնքի 2020 թվականի բյուջեով նախատեսված «ճանապարհային տրանսպորտ» ծրագրի նախահաշվի (բաժին 4 խումբ 5 դաս 1) «5113 – Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» տնտեսագիտական դասակարգման հոդվածի գումարից 432588 /չորս հարյուր երեսուներկու հազար հինգ հարյուր ութսունութ/ ՀՀ դրամ կատարել տեղաշարժ նույն նախահաշվի «5134 – Նախագծահետազոտական ծախսեր» հոդվածի գումարին:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ. ՂԱՐԱՔԵՇԻՇՅԱՆ